

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ԵԿՈՂ 1888 ԹԻԻՆ

„ՄՇԱԿ“

ԴՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք կը ստանանք սեփական
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսվանը 6 ռուբլ:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բազմաբարձր Կողմերի ան-

կիւնում, Թամաշվելի տանը):
Կայսերական ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՐ ԱՐՄԵՐՈՐԴ

ԲՈՎԱՆԳԻՐՈՒԹԻՒՆ

Մի հայերէն ամսագիր պահանջ.—Ներքին ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ, Ընթերցանութիւն և Լրագիր. Նամակ
Բաթումից. Նամակ Ախալքալայից. Ներքին Լու-
րեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Անգլիական բան-
ւորներ. Տեղեկութիւններ Թիւրքաց Հայաստանից.
Արտաքին Լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐ-
ՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱ-
ՍԻՐԱԿԱՆ. Մի քանի խօսք մեր վէպերի առիթով:

ՄԻ ՀԱՅԵՐԷՆ ԱՄՍԱԳՐԻ ՊԱՆԱՆՁ

Տեղական լրագիրները այս օրերս լուր
հաղորդեցին, որ մի քանի երկրաստորներ
զիտաւորութիւն ունեն մի հայերէն ամսա-
գիր հրատարակել Շուշի քաղաքում: Իսկ
բարձրագոյն ուսումնաստացած մի երիտասարդ
ձեռնամուկն է լինում Թիֆլիսումն էլ մի
հայերէն ամսագիր հրատարակելու:

Այդ լուրը չէ կարող չուրախացնել այն
բոլոր մարդկանց, որոնք ճշմարիտ հասկա-
նում են մեր մէջ մի օրինաւոր ամսագիր
ունենալու անհրաժեշտութիւնը և անկեղծ
կերպով ցանկանում են մեր մամուլի առա-
ջադիմութիւնը:

«Մշակը» իր գոյութեան ընթացքում
շատ անգամ իր միտքն է յայտնել թէ ի՞նչ
ուղղութիւն, ինչ տեսակ բնաւորութիւն
պիտի ունենայ հայերէն լեզուով հրատա-
րակվող ամսագիրը, ուրեմն աւելորդ ենք
համարում կրկնել այստեղ մեր շատ ան-
գամ յայտնած կարծիքը:

Ոչքեր են այն անձինք, որոնք ձեռնա-
մուկ են լինում Թիֆլիսում մի ամսագիր

հրատարակելուն,—մեզ յայտնի չէ, այդ
պատճառով մենք չենք էլ կարող ասել թէ
ի՞նչ ուղղութիւն կունենայ ամսագիրը և
առհասարակ ո՞րքան կաջողվի յիշեալ ամ-
սագիրը ձեռնարկող պարոններին: Միայն
այսքան կարող ենք ասել. մեր կարծիքով
ինչքան էլ թերի լինէր հայերէն ամսագի-
րը իր բովանդակութեամբ և նոյն իսկ ան-
համակրելի իր ուղղութեամբ,—գարձեալ
միայն Թիֆլիսի պէս մեծ քաղաքում կա-
րող է աջողվել հայերէն ամսագիրը և ոչ մի
ժամանակ մտաւոր ցլթիւրով աղքատ գաւա-
ռում, կամ մեզանից հեռու Պետերբուր-
գում:

Թիֆլիսը ունի արդէն ինտելիգենցիային
պատկանող բաւական մեծ թւով այլ և այլ
մասնագէտներ, որոնք շատ սակաւ են գա-
ւառներում: Միայն բարի կամք է հարկա-
ւոր և աշխատանքի մէջ փոքր ի շատէ
անձնութիւններ, և Թիֆլիսում կարող է
աջողվել մի օրինաւոր ամսագիր հայերէն
լեզուով: Ընդհակառակն Պետերբուրգ կամ
Մոսկովա հեռու լինելով Անգլիական և Եւրո-
պայի հայերէն կենտրոնացած են, այնտեղից
չէ կարելի հետեւել մեր հասարակական
առօրեայ խնդիրներին և նրանք ամբողջ
ամսագրական առաջնորդող յօդուածներում
իսկ ինչ որ վերաբերվում է մեր երկրի
գաւառական քաղաքներին, մենք միշտ այն
միտքն ենք յայտնել թէ մեր գաւառներում
կարելի էր հրատարակել փոքրիկ տեղական
լրագիրներ, փոքրիկ գաւառական շաբաթա-
կան թերթեր, և ոչ թէ ամսագիրներ: Եւ
ճշմարիտ, փորձեր էլ եղան գաւառներում
փոքրիկ թերթեր հրատարակելու, բայց
դժբաղդապէս երբեք աջողութիւն չունե-

րատանջ սիրահարների յաւիտենական հանգստու-
թեան երկու դազադ: Դադադները չինկեցան ծը-
նողների պատճառով, դրանք թող չը տուին սի-
րահարներին ամուսնանալ, ասան նրանք մեռան,
բողոքելով հայրական կամ մայրական բռնութեան
դէմ: Ամեն մի գրող կայնում էր այդ կամքին
մարմնի միւս մասերը, ինչքան որ չնորս ունէր և
նոր վէպը պատրաստ էր: Եւ այսպէս շարունակ-
վում է մինչև մեր օրերը:

Հաշիւ չը կայ մինչև այժմ մեր տեսած այդ
կամքներին: Եթէ մարմնի մասերը զանազանվել
են կազմուածքի կողմից, բայց հոգին միշտ մի և
նոյնն է եղել, և այդ միասնականութիւնը անքան
սովորական, այնքան ձանձրացուցիչ է, որ շատ
վէպերի վերնադիրը տեսնելիս, կամ թէ սկիզբը
կարգացած իմանում են թէ ինչ է լինելու վերջը:
Միշտ հետեւելով մի յայտնի թէմայի, միշտ կրկնե-
լով մի միտք, ինքնուրոյնութիւն չաւանան
չափով է կարելի արտայայտել. միշտ մի և նոյն
սեղմված շրջանի մէջ գործելով, ոչ միայն մոռե-
րը, այլ և բառերն ընդհանրանում են, անցքերը
դասաւորվում են միակերպ, դէմքերը միանա-
նութեամբ տանջող ձանապարհ լայնանում է,
գնալը հեշտանում. ու որ փոխելու կարողութիւն
ունի, քայլում է. պատկերները զրկվում են դէմ-

ցան, որովհետև միշտ շեղվում էին այն
ուղղութիւնից, որին խտուրթեամբ պէտք
է հետեւէին: Ի՞նչ միտք ունէր, օրինակի հա-
մար, հրատարակելով մի փոքրիկ գաւառա-
կան թերթ Երևանում, փոխանակ ուսում-
նասիրելու երկիրը ազգագրական և տնտե-
սական կողմից, փոխանակ բուն տեղական
հետաքրքիր լուրեր հաղորդելու ընթերցո-
ղին,—գրադիւլ թիւրքաց Հայաստանի վի-
ճակով, վճռել մեծ մեծ խնդիրներ, կամ
լցնել գաւառական թերթի էջերը Թիֆլի-
սում ապրող այս ինչ մարդու անձնական
կեանքի վրա անվերջանալի և յանդուգն
յարձակումներով... Ի հարկէ այդ տեսակ
ուղղութիւն ունեցող, կամ աւելի լաւ է
ասել՝ ամեն տեսակ ուղղութիւնից զուրկ մի
գաւառական թերթ երբեք չէ կարող աջող-
վել:

Առհասարակ միայն այն ժամանակ մի
որ և է ձեռնարկութիւն աջողվում է, երբ
գործին ձեռնամուկ եղողը չէ անցնում ի-
րան համար գծադրված սահմաններից
դուրս և համեմատութեամբ սահմանափակ-
վում է իր շրջանակներում:

Թիֆլիսը ամբողջ Կովկասի և Անգլիոյ-
կասի մայրաքաղաք է,—բայց այնու ամե-
նայնիս ծիծաղելի է, երբ Թիֆլիսում հրա-
տարակվող որ և է հայոց, վրաց, կամ նոյն
իսկ ռուսաց թերթ, փոխանակ միմյան
ծանօթացնելու իր ընթերցողներին և Եւրո-
պական քաղաքական անցքերի հետ, հա-
մարձակվում է առաջնորդող յօդուածներ-
ում վճռել ընդհանուր եւրոպական քա-
ղաքական խնդիրներ, դառն դասեր տալ
Կալիֆոռնիայի, Մալթաբերի, քարոզներ կար-
դալ Բիսմարկի գլխին և այլն... Բայց
Թիֆլիսում հրատարակվող հայոց թերթը
իրաւունք ունի զբաղվել ընդհանուր Կովկա-
սեան հարցերով և ընդհանրապէս հայերին
վերաբերելի խնդիրներով:

Ուրիշ կողմից գաւառական թերթը կա-
րող է աջողվել միայն այն ժամանակ, երբ
կը զբաղվի միմյան այն նահանգի ուսում-
նասիրութեամբ, որտեղ ինքն հրատարակ-
վում է:

Վերջապէս մի հայերէն ամսագիր կարող
էր աջողվել միմյան Թիֆլիսում, որտեղ
բաւականաչափ ինտելիգենտ երիտասարդ-
ներ, ամեն տեսակ մասնագէտներ կան, ո-
րոնք կարող կը լինէին նուիրել իրանց ոյ-
ժերը ամսագրի աջողութեանը, միայն այն
պայմանով ի հարկէ, որ զրանցից մէկը
լինի բաւական փորձված և բազմակողմա-
նի զարգացած, որպէս զի կարողանար
խմբագրի կոչմանը արժանի լինել և ըն-
դունակ լինել հաստատ ուղղութիւն տալ

յանձն առած հրատարակութեանը:

Այդ տեսակ ամսագիր չէ կարող աջող-
վել ոչ գաւառներում, որտեղ ինտելիգենտ
ըլժերը սակաւ են, ոչ էլ Ռուսաստանի
մայրաքաղաքներում, որոնք հեռու են մե-
զանից և որոնց մէջ ապրող հայ կօլօնիան,
անջատված լինելով մեզանից, նրան կազ-
մող անդամները այլ ևս անընդունակ են
ըմբռնել մեր երկրի առօրեայ պահանջնե-
րը: Այդ պատճառով այնտեղ հրատարակ-
վող մի հայերէն ամսագիր, որը կուզենայ
ուղղութիւն տալ մեզ, կուզենայ ինքնու-
րոյն ուղղութիւն ունենալ, իր նպատակին
չի հասնի և կը լինի միմյան անկենդան,
մեռած մի հրատարակութիւն:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳԻՐ

Ով որ պարել է գաւառներում և գիւղերում, կամ
հետաքրքրվել է գիւղացու կեանքով, անշուշտ նա
իր աչքի առջև պատկերացրած կը լինի նորա մը-
տաւոր աղքատութիւնը: Պիւղական հասարակու-
թիւնը մեծաւ մասամբ անուս է. նա չունի մտա-
ւոր կեանք. նա չընկալած է միմյան մի տե-
սակ բարոյական շատ անգամ իրան էլ անհաս-
կանալի գաղափարներով: Պիւղացի երկրագործը
բացի իր վարելահողից, գութանից և արօրից ու-
րիշ բան չը գիտէ. նա գաղափար չունի ուսման,
ընթերցանութեան և կրթութեան մասին: Ամեն
ինչ գիւղում ընթանում է նահապետական եղա-
նակով:

Երբեմն պատահում են տիրացուներ, որոնք մի
քանի աշակերտներ ժողոված ուսուցանում են,
բայց սա ուսուցանել չէ, այլ փայտկալի և քա-
նոնի հարուածների տակ ընթանելն է, առանց այն
էլ ժառանգական դարձած յատկութիւնները:

Եթէ գիւղում լինի նոյն իսկ ուսումնարան, որը
կեանքի մէջ չաբուսն աւելցնէ չունի, նա
չէ կարող ծառայել իր բուն նպատակին:

Դիցուք մի մանուկ մտաւ գիւղական դպրոց և
4—5 տարի կարդալով այդ դպրոցում, աւարտեց
դասընթացը, ապա մտաւ կեանքի մէջ,—դարձաւ
կամ արհեստաւոր, կամ վաճառական կամ հողա-
գործ: Այդ պարագայում ժամանակ, եթէ նա
բոլորովին թողնում է այն, ինչ որ 4—5 տարի
զբաղեցրել էր նորան՝ ուսումը, նա հետզհետեւ
մոռանում է իր սովորածը և իր այժման շրջանի
զօրեղ աղքատութեան տակ բռնած հնեւի ձանա-
պարհը, ներկայացնում է այն, ինչ որ իր հայրին

եթէ ձեր ժողովուրդը, ձեր կեանքը քիչ նմանու-
թիւն ունի այն ժողովուրդին կամ կեանքին, որի
մէջ ես եմ ապրում, դուք էլ ինչպէս երկար և ի-
զուր պիտի օրոնեք սիրահարված զոյգեր, որոնք
խօսք են տուել այրվել դժոխքի մէջ միմյան և
ոչ արքայութեան մէջ անջատված միմյանից:
Իմ խօսքը բացառութիւնների մասին չէ, առանց
բացառութեան օրէնք չը կայ տիեզերքում, այդ
մի այրուքնական գիտելիք է: Իմ խօսքը նմանա-
պէս այն վիպասանների մասին չէ, որոնք ձառե-
լով նոյն անհաւատալի գերաշխարհային սիրոյ
մասին, տաղանդ են ունեցել մեր կեանքի ուրիշ
կողմերը գիտել, նկարագրել, ստեղծել են տիպեր,
գրողներով նրանց ձախտել իրական ճշմարտու-
թիւնը: Բայց այսպիսի բացառութիւններ տարա-
բաղդաբար շատ քիչ են, մի հինգ կամ վեց օրի-
նակ կարող ենք հաշուել. իսկ հեղինակներին մե-
ծամասնութիւնը, սկսած Պօլսի և Չմիւռնիայի
վիպագիրներից, որոնք մեծ աջողութեամբ հնա-
րեւ են իրանց գործերի համար «սիրային» անունը,
ձանձրացնում է մեզ իր «հեշտակալի» սիրով,
«երկային» հրով բորբոքված սիրահարներով: Մեր
հոգեւորականութիւնն անգամ չէ կարողացել չը հը-
րապարկել սրտի և գեղեցկութեան զործերով և
տուել է հեղինակներ, որոնք ուրիշներից պակաս

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ԳԱՆԻ ԽՈՍՔ ՄԵՐ ՎԷՊԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Քիչ չեն մեր մէջ վիպական գրուածքները:
1860 թականներից մինչև մեր օրերը վիպա-
գրութիւնը զարգացաւ հետզհետէ, արտադրելով
հատորներ, որոնք եթէ մի առանձին պատիւ չեն
բերում մեր գրականութեան, գոնէ քանակու-
թեամբ ստուարացնում են հայ մատենագրու-
թեան ցուցակը:

Հենց 60-ական թականներից մեր վիպաս-
նութեան մէջ գերիշխող տեղ բռնեց սիրային
վէպը: Այն ժամանակն էր որոշվեցաւ մեր ապա-
ղայ վէպերի հոգին ու միտքը: Միանգամայն ընդ
միշտ ընդգնդվել էր մի այսպիսի կամքը վէպի
համար. սէր, բարձր, հեշտակալի սէր մի օրի-
որդի և մի երիտասարդի մէջ, գաղափար տեսակ-
ցութիւնների լուսնի լոյսով, հրաբորբոք համբոյ-
նեք, ան ու արտասուք և այլ այս տեսակ շա-
րունակութիւնս վէպի վերջը երկու դադադ, չա-

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԱԿԻ ԳՈՐԾԱԳԱՆՈՒԹԻՒՆՑ

ԲԵՐԼԻՆ 18 զեկտեմբերի Լուրերին նայելով, իրապարհի փոխարեն միանապատկարային կը նշանակվի իրապարհը:

ԲԵՐԼԻՆ 18 զեկտեմբերի «National Zeitung» լրագիրը անպայման պնդում է, որ գերմանական ազգու չըջաններում ոչ թէ միայն պատերազմ չեն ուզում, բայց և չեն էլ նախատեսում: Հաստ նպատակադրման կը լինի, — ասում է լրագիրը, — եթէ իշխան Բիսմարկ իր ազգու խօսքը խաղաղութեան օգտին կը տայ, միւս կողմից, ընչ հաւանութիւն կայ, որ Ռուսաստանը պատերազմի մէջ խառնէր Գերմանիային և նրա դաշնակիցներին: Լրագիր կարծիքով խաղաղութեան պահպանութեան կողմում աւելի շանսեր կան: Թէ և այդ խաղաղութիւնը հաւասար չէ այն հանգստութեան, որը զեռ ևս Եւրոպան կատարելապէս չէ վայելում:

ՊԵՏԵՐԲՈՐԳ 19 զեկտեմբերի Կառապալի նահանգապետ Ժուկով, իր խնդրի համաձայն, հիւանդութեան պատճառով, արձակված է ծառայութիւնից: Կապալի մէջ գտնվող շարքաւորները անհաշիւ զանազան հասանելի վճարումները կարողադրութեամբ, կարող են տարածվել նոյնպէս և սեփական և ընկերակցութեամբ հիմնված գործարանների վրա: Մուրհակներ կեղծելու գործի պատճառով դատարանը վճռեց, դատապարտեալներին զրկել առանձնակի իրաւունքներից և արտաքին Բազովին իրկաւորի նահանգը, Կուդրեւսկիին, Պոլովոյին և Նուրյովին Տոմսկի նահանգը, Գուսնոյին և Վիլկին գետերի կաւանաւորների խմբի մէջ, առաջինին երկու, իսկ վերջինին մէկ ու կէս տարով, դրա հետ միասին խնդրամատոյց պէտք է լինել թաղաւոր Կայսրին, որպէս զի Բազովի և Կուդրեւսկի վրա դրած պատիժը փոխարինվի Արեւմտեան Նահանգը ուղարկելով, իսկ Պոլովոյ բանտարկվի մի տաւրով: Կեղծ համարված մուրհակները ոչնչացնել «С. Петерб. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ վճռված է 1888 թվականի երկվթագործարաններին առանձին պրեմիաների տալը դադարեցնել, և միայն գործարանատերերին իրաւունք տալ, որ ներանը պետական բանկից փոխառութիւն անեն հնչտացրած պայմաններով:

ՀԻՄՆԱԿԻ 19 զեկտեմբերի Պապը, իր յօքնեանի առիթով, երէկ ընդունեց շնորհաւորութիւն կարգինաների և մի քանի կայսրների յատուկ ղեկապանների կողմից, և դրանց թուում Վիեննայ կայսրի կողմից:

ՊԵՏԵՐԲՈՐԳ 20 զեկտեմբերի Լրագիրները հաղորդում են, որ Կապալ-Պրեսնաւորեան նաւթանցքի ընկերութեան կանոնադրութիւնը վերջնականապէս հաստատված է:

ԲԵՐԼԻՆ 20 զեկտեմբերի Կոմս Պետր Շուպով վերադարձաւ Պետերբուրգ:

ԲՈՒԽՈՒՐՆԱԿ 20 զեկտեմբերի Պատգամաւորներ ժողովը արձակված է և նոր ընտրութիւնները նշանակված են փետրվարի 4-ին:

ԲԵՐԼԻՆ 20 զեկտեմբերի Ռուսաց կառավարութեան պահանջի համաձայն, պետական կանցիլը կարգադրեց ստուգել բոլոր քաղաքային հարցի վերաբերութեամբ ստացված կեղծ դոկումենտների բոլանդակութիւնը և ծաղկումը, և այսօր այդ առարկայի մասին «Պետական Համարներ» մէջ տպված է հետեւեալը: «Այդ դոկումենտները հնարված են յատկապէս այն նպատակով, որ կասկած յարույցանեն դէպի գերմանական քաղաքականութիւնը, և մտքերը չփոթեն նրա աշխատեման վերաբերմամբ: Այդ իրաւացի կը լինէր, եթէ դոկումենտները բոլանդակութիւնը հիմնված լինէր ճշդ մարտութեան վրա, բայց գերմանական քաղաքականութիւնը հենց ակզբից Կորուրդի պրինցի ձեռնարկութիւնը համարել է և համարում է դուրս թիւն ունեցող դաշնագրերի հակառակ, և հենց այդ մտքով պաշտօնական կերպով հաղորդագրել է բոլոր կառավարութիւններին, մասնաւոր ուստաց կառավարութեանը: Եթէ յիշեալ դոկումենտները, մասնաւոր Վիեննայի գերմանական դեսպանին վերադրվող նամակները, իսկական լինէին, և եթէ կեղծ նամակները բոլանդակութիւնը հիմնված լինէր ճշմարտութեան վրա, այն ժամանակ իրաւացի կերպով կարելի կը լինէր մեղադրել գերմանական պաշտօնական քաղաքականութիւնը:

ԵՐԵՎԱՆԻՑ 18 զեկտեմբերի 18-ից, մեզ գրում են որ այդ օրը վերջապէս սկսեց անձրև զալ Երևանում: Հաջորդական Երևանում սկսել են էժանանալ. ցորենի պուղը արժէ 1 ռ. 20 կ. մինչև 1 ռ. 30 կ. իսկ դարին առաջվայ գինն ունի, այն է պուղը 90 կոպէկից մինչև 1 ռուբլի:

Հարաւ օր, 19-ին զեկտեմբերի կատարվեցաւ ԹԻՖԼԻՍԻՄ բժշկապետ Գարուիւն Գովանիսի-սեանի թաղումը: Հանգուցեալը, որքան մեղ յայտնի է, հայերից առաջինն էր, որ Գորպատի համալսարանում բժշկական Եր. որպէս բժիշկ նա մի ժամանակ մեծ ժողովրդականութիւն ունէր Թիֆլիսում, մասնաւոր մեր ազգաբնակչութեան միջին և ստորին դասակարգերի մէջ: Փոխադրւածութեան ժամանակ հանգուցեալը բարձր պաշտօնների էր հասել, նա երկրիս քաղաքացիական բժշկական մասի ղեկաւորն էր և մի ժամանակ Մեծ Խլխանի պալատում տնային բժիշկ էր:

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են զեկտեմբերի 15-ից հետեւեալը: Երեկ հեռագիրը մեզ տեղեկացրեց որ կերօսինի ակցիոնը արդէն հաստատվել է պուղին 40 կոպէկ, և պիտի գործադրվի առաջիկայ թիւ յունվարի 15-ից: Այնու ամենայնիւ կերօսինի առևտրի մէջ մի զգալի փոփոխութիւն չեղանք բաժնուում. դրեւ 42 1/2—43 կոպէկ է և պահանջը այդ բերքի վրա միջակ է: Գործնի գրութիւնն էլ նոյն է, դրեւ 1 ռ. 5 կ. մինչև 1 ռ. 14 կոպէկ, և պահանջը շատ թույլ է: Երկրպագորենը արժէ 65—66 կոպէկ:

Այս օրերս հասաւ ԹԻՖԼԻՍ խախտահողական ձեռնածու պ. Էպիտան, որ և մտադր է իր առաջին ներկայացուցել Թիֆլիսում տալ 25-ին զեկտեմբերի, քաղաքային թատրոնում:

ԳԱՆՁԱՎԻՑ մեզ գրում են «Ահա մօտ երկու տարի է որ մեր քաղաքում տարածված է ծաղիկ ասված հիւանդութիւնը, որին զոհ են դնում օրական մի քանի հոգի մանուկներ: Բայց մինչև այժմ ոչ մի կարգադրութիւն չէ եղած այդ ցուրտ տարածման դէմ առաջն առնելու համար տեղիս առողջապահական մասնաժողովի կողմից»:

ԲԱԳՈՒՆԻՑ պ. Ն. Ա. Մարտիրոսեանց, գրվելով «Մշակին», ուղարկել է մեզ դարձեալ 10 ռ., որպէս զի այդ փողով ուղարկենք «Մշակին» մի տարեկան օրինակ ուս կը կամենանք: Այդ փողով կուղարկենք «Մշակը» Ղուբայի հայոց դպրոցին:

Գեկտեմբերի 20-ին, Թիֆլիսի երկրորդ դիմադրայում կայացաւ հանդիսաւոր ակում, որին ներկայ էր բազմաթիւ հասարակութիւն: Գիմնազիայի ղեկավարը կարգաց մի շատ երկար ճառ Ողիսեւսի մասին, որը հանած էր այդ նշանաւոր յոյն հերոսին վերաբերեալ իր մի աշխատութիւնից: Հասարակութեան վրա լաւ տպաւորութիւն թողեցին աշակերտների կարգացած ուսուցիչն, գերմաներէն և ֆրանսերէն մի քանի ուսանաւորները, մասնաւոր աշակերտական նաւադաւանդը և երգեցիկ խմբի ներդաշնակ երգերը:

Երէկ Ռուսաստանի փոստը չէ ստացվել, Կովկասեան սարերի վրա եկած մեծ ձիւնի պատճառով:

Էջմիածնի «Արարատ» ամսագրի վերջին համարից իմանում ենք, որ Էջմիածնի տաճարի վերաշինութեան համար Պալին հայոց պատարիքից և մի քանի պոլսեցի հայերից ստացվել է 5000 ռուբլի: Նոյն նպատակի համար Վրաստանի թէմից՝ Արխիմանկէս եպիսկոպոս Սեդրակեան ուղարկել է 4973 ռուբլի 68 կոպէկ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻՍԱԿԱՆ ԲԱՆԻՈՐՆԵՐԸ

Տնտեսական ճգնաժամը և բանւորների նեղ վիճակը ստիպեցին մի քանի երկրների կառավարութիւններին մի շարք միջոցներ ձեռք առնել, աշխատող դասակարգի դրութիւնը գէթ մի փոքր լաւացնելու նպատակով: Ի միջի ալլոց, այդ ներպատակով այժմ թէ Ամերիկայում և թէ Անգլիայում մի շարքում կայ, որով ուզում են արգելել

օտար երկրներից բանւորների գալուստ, որոնց թիւը, ինչպէս յայտնի է, շատ մեծացել է այդ երկրներում: Մեծ-Բրիտանիայում գերմանացի բանւորները ահագին բանակութիւն են կազմում, և բաւական ճշուում են տեղացի բանւորներին, որով հետևաբար գերմանացի բանւորները համաձայնում են աշխատել ամենաչափաւ վարձատրութեամբ, և այդպիսով բնացենով բանւորների վարձը, ստիպում են տեղացիներին ասպարէզել իրանց թողնել: Անգլիայի բանւորները չեն կարողանում դիմանալ Գերմանիայի բանւորներին բրցմանը, և ահա հենց այդ պատճառով, զեկտեմբերի 4-ին բանւորների մի ահագին պատգամաւորութիւն ներկայացաւ ներքին գործերի մինիստրութեանը, և խնդրեց հովանաւորել տեղական բանւորներին և պաշտպանել նրանց շահերը երկրների դէմ: Բանւորների պատգամաւորութիւնը խնդրեց մի նիստրութեանը՝ կառավարութեան բոլոր հիւպատոսներին միջոցով յայտնել արտասահմանում, որ լոնդոնում այժմ աւելի բանող ձեռքեր կան, քան թէ աշխատանք, և դրա հետ միասին ձեռք առնել զանազան նպատակադրման միջոցներ՝ օտար բանւորների հոսանքի առաջն առնելու համար: Թէ որքան այդ հովանաւորող սիստեման համակրութիւն կը գտնի զանազան շրջաններում, — այդ յայտնի չէ, միայն ներքին գործերի մինիստրը խոստացաւ բանւորների պատգամաւորութեանը՝ լուրջ ուշադրութիւն դարձնել նրանց խնդիրը վրա: Ձը խօսելով բանւորների առաջարկած զանազան միջոցների լաւ կամ վատ լինելու մասին, մինիստրը յայտնեց, որ ինքը միանգամայն համոզված է այդ հարցի կարեւորութեան մէջ, և անպատճառ կը զբաղվի դրանով: Անգլիական մինիստրի այդ յայտնութիւնը միանգամայն հասկանալի է թէ, — բանւորական հարցը այսօր Եւրոպայում դարձել է մի ամենաառաջնակարգ խնդիր, որը պէտք է լուծել, և չը թողնել, որ աւելի բարդ կերպարանք ստանայ:

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐԿՍՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Կ. Պոլսում հրատարակվող «Ֆար դը Բոսֆոր» լրագիրը իր վերջին համարներից մէկում հրատարակել է հետեւեալը. «Զմիւռնիայից հեռագրում են մեզ, որ այս կիրակի օր, քաղաքի հայոց եկեղեցու մէջ աղմկալից ցույցեր են տեղի ունեցել տեղական առաջնորդ գեր. Մեղիսեանի կախկապութիւն հրաժարվել պահանջելով»:

Պոլսի հայոց լրագիրներում կարդում ենք, որ մի յատուկ պատգամաւորութիւն ներկայացաւ Կրօնական ժողովին և ներկայացրեց մի հանրապիր, որին ստորագրել էին պոլսաբնակ շատ հայեր: Այդ հանրապիրը բողոքում էին Զմիւռնիայի գերեզմանատան ոսկորները ուրիշ տեղ փոխադրելու վերաբերմամբ եղած որոշման դէմ: Կրօնական ժողովը ընդունելով այդ հանրապիրը ներկայացնող պատգամաւորութիւնը, յորդորեց որ միաժամ լինեն, և վստահեցրեց, որ Կրօնական ժողովը արդէն անում է, ինչ որ հարկաւոր է: Այդ գործի հետեւանքները արդէն յայտնի են:

Զէյթունի հրկիզեալների թշուառ վիճակի մասին արտասուալի լուրեր են գալիս Արիւնիայից: Անտուն և անտէր մնացած հրկիզեալները սարսափով են նայում վրա հանող սաստիկ ցրտերի: Նրանցից շատերը պատսպարված են գոմերում: շատերը այդ ողորմելի ապաստանն էլ չունեն, և այդ դեռ բաւական չէ, հայի պակասութիւնը մի կողմից և սաստիկ ցուրտը միւս կողմից միանգամայն անտանելի են դարձնում այս թշուառները: Վիճակը, որոնք քանի մի ժամանակ առաջ վայելում էին կեանք: Այդ անտանելի կեանքի շնորհիւ արդէն շատերը զոհ գնացին զանազան հիւանդութիւնների Զմեռը հասել է, հայ չը կայ, օգնութիւն չը կայ, չը կայ ապաստարան, չը կայ միջիթաղող, ուրեմն ինչ պէտք անի դժբաղդ Զէյթունցիները...»:

Հայաստանի մի քանի կողմերում, ինչպէս երևում է վերջին լուրերից, սովը բաւական նեղ դրութեան մէջ է գրել ազգաբնակչութիւնը: Բազմաթիւ առաջնորդը դիմելով պատրիարքարանին, և յայտնելով, որ զարման ցանքների փըշանալու պատճառով հայ չը կայ, ցորենի չափը 20 դրուշից 100-ի է բարձրացել, օգնութիւն է խնդրում: Կրօնական ժողովը որոշեց կառավարութեան ուշադրութիւնը դարձնել Բազմաթիւ ժողովրդի այս ծանր դրութեան վրա:

Արիւնիայի կաթողիկոսը տեղեկացրել է Պոլսի

Կրօնական ժողովին, որ Ատանայում, սովի պատճառով հայերը կրօնափոխութեան փորձեր են անում, որովհետև օտար քաղաքիցները օգուտ են քաղում ժողովրդի նեղ դրութիւնից և նրանց օգնութիւն ցոյց տալով դէպի իրանց ևս գրաւում:

Վանի առաջնորդական փոխանորդ Ալեքսանդր եպիսկոպոսը դիմելով Կ. Պոլսի Ազգային ժողովին, սրտաճակի կերպով նկարագրում է տեղացի դիւղարանակ հայերի թշուառ վիճակը՝ սովի և թանգութեան պատճառով: Կրօնական ժողովը որոշեց գրել տեղական վանքերին՝ որ ըստ կարելոյն նպաստեն աղքատներին:

Ինչպէս յայտնի է, վաղուց մտադրութիւն կայ Վանայ լճի վրա շողենաւ բանիցներու Այժմ, ինչպէս գրում են Վանից, այդ միտքը իրականանալու մօտ է: Թիւրքաց ծովային մինիստրութիւնը մի յանձնախումբ ուղարկեց Վան, Վանայ լճի նաւարկելութեան պայմանները ընկելու համար: Այդ յանձնախումբը արդէն հասել է Վան, ուստի նաւարկել է լիճը և տեղեկագրեր ուղարկել է Պոլսի կարծում են որ այդ տեղեկագրերը նպաստաւոր է այդ հարցը դրականապէս վճռելու համար:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Times» լրագրի Վիեննայի թղթակիցը գրում է, որ Աւստրիայում վերջին օրերում տեղի ունեցած պատերազմական տաքնալի պատճառը եղել է իշխան Բիսմարկ, որը Վիեննայի գերմանական դեսպանի միջոցով յայտնել է կոմս Կալ-նօկիին, թէ Ռուսաստանը այնպիսի դիրք է բռնունել, որ Աւստրիան և Գերմանիան անպատճառ պէտք է պատրաստութիւններ տեսնեն:

Կ. Պոլսից հեռագրում են «Paris» լրագրին, որ այնտեղի կառավարական շրջաններում այժմ խօսում են Սարիֆի փաշայի մեծ-վիզիր նշանակվելու մասին:

Արտասահմանի լրագիրները հաղորդում են, որ Ֆրանց Գոլտեի կայսրի նախադասութեամբ կայացած խորհուրդներում յատկապէս Բազմաթիւի հարցի առիթով որ և է վճիռ չէ կայացրել:

«Հավասի գործակալութիւնը» հեռագրում է Սօֆիայից, որ այնտեղ ոչինչ խօսք չը կայ Կոբուրգի պրինցի դահից հրաժարվելու մասին, թէ և ընդդիմադրական կուսակցութեան տարածած լուրերին նայելով, Բազմաթիւում շուտով պէտք է արտասուրդ դէպքեր պատահեն: Այդ մի և նոյն տեղեկութիւնը Կոբուրգի պրինցի մասին հաստատում է «Նյետերի գործակալութիւնը»:

Ինչպէս յայտնի է, բոլորական ընդդիմադրական կուսակցութեան պարագլուխ Գանսով ալթմապրում է Կ. Պոլսում Վերջին ժամանակները լուրեր տարածվեցան, որ նա ուզում է գնալ Պետերբուրգ, բայց այժմ Պոլսից գրում են, որ Գանսով յետ է կացել Պետերբուրգ գնալու մտադրութիւնից, ասելով որ շուտով Բազմաթիւում նշանաւոր դէպքեր պէտք է տեղի ունենան, և ինքը այդ ժամանակ անպատճառ պէտք է Բազմաթիւում լինի:

ԻՍԱՌԵ ԼՈՒՐԵՐ

Ինչպէս յայտնի է, քանի մի ժամանակ առաջ հիմնվել է Բերլինում «Արեւելեան սեմինարիա», որի նպատակն է աւանդել արեւելեան լեզուները և հետազոտել արեւելի հնութիւնն ու պատմութիւնը: Այժմ, ինչպէս հաղորդում են լրագիրները, հիմնվում է Բերլինում և մի «Արեւելեան ընկերութիւն», որի նպատակն է ուսումնասիրել արեւելքը: Առհասարակ Գերմանիայում ձգտում է նըշմարվում այժմ ուսումնասիրել արեւելքը:

Այս օրերս վախճանվել է Ամերիկայում մի շատ հարուստ կին, տիկին Աստոր ազգանունով: Այդ հարուստ ամերիկուհին, չը նայելով որ բաղմաթիւ բարեգործական հիմնարկութիւններ իր հայրենիքում վաղուց է արդէն կալում են իր անունը, դարձեալ կտակել է իր ահագին կարողութեան մի նշանաւոր մասը այլ և այլ մարդասիրական նպատակներին: Տիկին Աստորի թողած կարողութիւնը հասնում է 200 միլիոն դոլարին:

Շուշուց մեզ գրում են հետեւեալը: «Այս օրերս քաղաքում զիւղում թուիս նստած հաւի ձուերի մէկի միջից դուրս է գալիս չորս գլխանի մի ձու: Մտաւարապաշտ տան տիկինը անմիջապէս սպանում է չորս գլխանի ձուտին, քանի որ նրա կարծիքով այդպիսի հազուադիւս երևույթները չափազանց անարկու և չարադուշակ են»:

երկրորդական մէջ, իսկ նրա պաշտօնական հա-
ղորդութիւնները—անադիւնական մէջ: Գերմա-
նական կառավարութիւնը, որ բնականաբար ճշգ-
տում է բարեկամ պետութիւնների մէջ հաւատար-
մութեան զգացմունքներ պահպանել զէպի իր
բարեմտութիւնը և պարզութիւնը, հաւանա-
կանաբար շատ հետամուտ պէտք է լինէր այն
գործին, որ զոկումնաների կեղծելը պարզվէր և
որ այդ մասին կարելի լինէր յայտարարել պաշ-
տօնական կերպով: Տեղի ունեցած քննու-
թիւններից երևում է, որ Ֆրանգլիայի կոմ-
սուհու և Կորուրդի պրինցի մէջ երբեք ոչ մի
նամակագրութիւն չէ եղել, և որ պրինց Բէյսին
վերադարձող առաջագործութիւնները երբեք նրա
կողմից չեն արված. ուրիշ բարձրագույն անձինք-
ներին վերադարձող յարաբերութիւնները նոյնպէս
հնարովի են: Գրանից երևում է, որ այդ զօկու-
մնաները, որոնց կազմողները մինչև այժմ էլ
յայտնի չեն, յատկապէս նպատակ են ունեցել
փոխադարձ անհաւատարմութիւն առաջ բերել
Եւրոպական պետութիւնների մէջ, և որ դրանք
զուրկ են որ և է հաւատարմութիւնից, ու հնարովի
են:

ԲԵՂԱՐԱՅ, 21 դեկտեմբերի: Կազմակերպված է
արմատական միջնորդութիւն: Նախագահը նախ-
կին պատերազմական միջնորդ Գրուիչն է:

ՊԵՏՏ, 21 դեկտեմբերի: Միջնորդ նախագահ
Տիսաս, չնորհաւորութիւններ ընդունելով նոր
տարվայ առիթով, մի ճառ արտասանեց, որի
մէջ յայտնեց թէ ինքն զեռ. ևս յայտն չէ կորցրել
կաղաղութեան պահպանութեան վրա, բայց միւս
կողմից, պարտաւոր է զգուշացնել Ռեզորվային
չափազանց օպտիմիզմի դէմ, որը յաճախ թու-
լացնում է ինքնապաշտպանութեան ընդունակու-
թիւնը: Պատգամաւորների ժողովի նախագահ
Պէշի պատասխանեց, թէ մաղաքները պատրաստ
են զոհել ամեն բան գահը և հայրենիքը պաշտ-
պանելու համար:

ՎԻԵՆՆԱ, 21 դեկտեմբերի: Մագալինային հը-
րաքաններով զինաւորված պահստի զօրքերը
կանչվում են իրանց զօրաբաժինների կողմից մի
շարքով հրացանաձգութեան մէջ վարժելու հա-
մար:

ՓԱՐԻՉ, 21 դեկտեմբերի: Հանրապետութեան
նախագահ Կարնո, դիպլոմատների չնորհաւորու-
թիւնները ընդունելով, ցանկութիւն յայտնեց, որ
ամեն տեսակ երկրւոյ անհետանայ և ժողովուրդ-
ները կարողանան ապահովութեան կատարելա-

զգացմունքով ընթանալ բարոյական և նիւթական
առաջադիմութեան ճանապարհով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՈՍԱ

Դեկտեմբերի 18-ին

Ռուսաց 1 ռուբլ. 1 օնգոնի վրա արժէ	2013/16	պէնս.
— — — — —	1765/8	պֆ.
— — — — —	2213/4	սանի.
Ռուբլ. — — — — —	9	19 կ.
Մարտային կուպոններ — — — — —	183	1/4
Արժաթ — — — — —	1	33
Բորսային դիվիդենդներ — — — — —	57/8	4 70/0
Պետական 50/0 տոմս 1-ին շրջանի	99	62
— — — — —	2-րդ	97
— — — — —	3-րդ	97
— — — — —	4-րդ	97
— — — — —	5-րդ	97
— — — — —	6-րդ	97
Արեւելեան 50/0 փոխառութ. 1-ին շրջ.	98	—
— — — — —	2-րդ	97
— — — — —	3-րդ	97
Ներքին 50/0 առաջին փոխառութ.	275	—
— — — — —	երկրորդ	248
51/20/0 Բէնտա	103	—
Ռուբլայ Բէնտա	194	—
Եթեթրոյդ կոմպլեքսած փոխառու- թիւն	163	50
Նոր երկաթուղային Բէնտա	98	—
50/0 գրաւական թղթեր կալուած.	—	—
— — — — —	165	—
Գրաւ. թղթ. Արեւ. Բանկի	97	—
51/20/0 գրաւական թղթեր Եւրոպայի կալուած Բանկի	98	62
60/0 գրաւ. թղթ. Խաղաղութիւն կալ. Բանկ.	101	62
— — — — —	101	12
— — — — —	101	62
— — — — —	101	75
— — — — —	101	50
— — — — —	101	25
— — — — —	101	25
— — — — —	101	—
— — — — —	27 և 43	98
— — — — —	18 և 43	99
Վ. օր. Կալուած Բանկի անկախները	715	—
Ռուսաց երկաթուղային զինաւ. Բանկ.	267	—
Բրիտան. Վ. օր. Զոլովի Բանկ.	85	75
Ս. Պետերբուրգի քաղաքային օրդի- նացիաներ	93	50
Մոսկովայի քաղաք. օրդ. Կալուած	93	37
Օդէսայի — — — — —	93	37
Թիֆլիսի քաղաք. կրեդ. Բանկ. օրդ.	84	—
Նոր փոխառութիւն	81	62
Ս. Պետերբուրգի բորսայի արամադրութիւնը ամբանում է:	—	—

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՍԵՂԻՍԿ ԲՈՐՈՍԱՆՈՎԻՉ, ՎԱՐՎԱՐԱ ՍՈՒՍՐՈՆՈՎՆԱ ՇԱՀԻՆԱՐԵԱՆՆԵՐԸ և Ի-
ՍԱՀԱԿ ՍՈՒՍՐՈՆՈՎԻՉ ԲՈՒՂՎԱՆԵԱՆ Խորին ցաւով յայտնում են՝ առաջինը իր
եղբոր, երկրորդը իր ամուսնու և երրորդը իր փեսայ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲՈՐՈՍԱՆՈՎԻՉ
ՇԱՀԻՆԱՐԵԱՆԻ մահը: Յուզարկաւորութիւնը տեղի կունենայ Չուտուովի տնից,
որը գտնվում է Վազնանկայայ փողոցի վրա, դէպի Նորաշենի եկեղեցին, երեք-
շաբթի օր, դեկտեմբերի 22-ին, առաւօտեան ժամը 10-ին: 1—1

ПОДПИСКА НА
„Т Р У Д Ы“
Кавказского Общества Сельского Хозяйства
1888 года,
выходящие еженесячно и посвященные нуждам кавказской сельскохозяйственной
промышленности,
ПРИНИМАЕТСЯ ВЪ ТИФЛИСѢ,
въ канцеляріи Кавказскаго Общества Сельскаго Хозяйства, что на Ба-
ратинской улицѣ, въ Александровскомъ саду. Подписная цѣна изданія за
годъ ЧЕТЫРЕ РУБ. съ пересылкою во все города Россійской имперіи и
доставкою на домъ. Отдѣльные номера не продаются. Для напечатанія
въ „Трудахъ“ принимаются сельско-хозяйственныя объявленія, по соглаше-
нію съ бюро Общества. 1—3

ԲԺԻՇԿ ՊՐԷՍԲՐԱԺԵՆՍԿԻ
Բժշկում է էլ է կ տ ր ա կ ա ն ու թ ե ա մ ք,—Փարաբեյական և զարկանական հո-
սանքով՝ ձեռքերի և ոտքերի անդամալուծութիւնը, ջղալին հիւանդութիւնները, րիվ-
մատիզմ, կոնտրակտուրա (ջղերի բռնվելը), նոյնպէս կոյրերին, խուլերին և համբրին
անդամալուծութիւնից:
Բացի սրանից բժշկում է կանացի և սիֆիլիտական հիւանդութիւնները:
Ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան 9 ժամից մինչև 12 և երեկոյեան 7
ժամից մինչև 8. Վ. օր. Զոլովի Բանկի Նաբեբեժնայայ, Տէր-Օհանեսովի տանը: № 5.
2—4 (Շ. 4)

ՎԻԵՆՆԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

(Вѣнскій магазинъ)

Գօլովինսկի պրոսպեկտի վրա, Միլիանի տանը, առաջին կլասիկական զինապիւղի զի-
մաց:

Պատիւ ունեմ յայտնելու Թիֆլիսի քաղաքի Հասարակութեանն, որ ՄՕՏ ՕՐԵՐՍ
ստացել էմ զանազան յայտնի և նշանաւոր զործարաններից ՄԵՄ ԲԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
տղամարդկանց և երեխայոց աշնանային և ձմեռային ՊԱՏՐԱՍԻ ՀԱ-
ԳՈՒՍՏԵՆԻ ամենավերջին ձեւի Ամենի համար դները մատչելի և ձեռնտու են:
12—12 Վ. Խուզովերեանց

Годъ VI. Въ городѣ Карсѣ. Годъ VI.
(КАРССКОЙ ОБЛАСТИ)
О Т Ы Р Ы Т А П О Д П И С К А
НА ГАЗЕТУ
„КАРСЪ“
НА БУДУЩІЙ 1888 ГОДЪ.

Газета „КАРСЪ“ въ 1888 году будетъ издаваться на тѣхъ-же основаніяхъ,
какъ и въ текущемъ году, по той-же программѣ и подъ тою-же редакціею.
УСЛОВІЯ ПОДПИСКИ: съ доставкою и пересылкою въ годъ три рубля,
за четыре мѣсяца одинъ рубль. Подписка принимается въ редакціи газеты „Карсъ“,
куда адресуютъ свои требованія и иногородные.
Газета „Карсъ“ имѣетъ ближайшую цѣлью всестороннее изученіе Карсской
Области и распространеніе въ обществѣ вѣрныхъ и точныхъ свѣдѣній, какъ о
нынѣшнемъ ея состояніи, такъ и о мѣропріятіяхъ, направленныхъ къ ея благо-
устройству. 2—3

ГОДЪ Обь изданіи въ 1888 году XXIV
ИЛЛЮСТРИРОВАННАГО ЖУРНАЛА
СЕМЕЙНЫЕ ВЕЧЕРА.

Журналъ этотъ состоитъ подъ Высочайшимъ покровительствомъ Государыни Императрицы
Маріи Θεοδоровны. Рекомендованъ Ученымъ Комитетомъ Министерства Народнаго Просвѣщенія
—для гимназій, уѣздныхъ училищъ, городскихъ и народныхъ школъ, состоящихъ при IV отд.
Собств. ЕГО ВЕЛИЧЕСТВА Канцеляріи; Учебнымъ Комитетомъ для чтенія воспитанникамъ жен-
скихъ учебныхъ заведеній Императрицы Маріи; Духовно-Учебнымъ Управленіемъ рекомендованъ
начальствомъ духовныхъ семинарій и училищъ и Главнымъ Управленіемъ военно-учебныхъ
заведеній рекомендованъ для бібліотекъ военныхъ гимназій и прогимназій,—какъ изданіе,
представляющее обильный матеріалъ для выбора статей, пригодныхъ для чтенія воспитанни-
ковъ.

Статьи будутъ тщательно распредѣляться такимъ образомъ, чтобы первый отдѣлъ изда-
нія, состоящій изъ 12 книгъ, украшенныхъ картинами, распался на двѣ половины, изъ ко-
торыхъ первая составила-бы вполнѣ пригодное чтеніе для дѣтей отъ 8 до 14 лѣтъ, а вторая
—для дѣтей отъ 5 до 8 лѣтъ. Другой-же отдѣлъ заключалъ-бы въ себѣ, по преимуществу,
статьи приспособленныя для семейнаго чтенія такъ, чтобы все члены семьи нашли въ этомъ
отдѣлѣ вещи, которыя прочли-бы съ одинаковымъ интересомъ и пользою.

При отдѣлѣ семейнаго чтенія будутъ разсылаемы приложенія рисунковъ новѣйшихъ ру-
кодѣлій, а при отдѣлѣ для дѣтей—рисунки техническихъ искусствъ и различныя игры и за-
нятія, а также награды подписчикамъ, приславшимъ опредѣленное редакціею количество за-
дачъ и рѣшеній.

Награды будутъ состоять изъ сочиненій лучшихъ авторовъ, какъ русскихъ такъ и ино-
странныхъ.

Кромѣ того, всемъ подписчикамъ на оба отдѣла «Семейныхъ Вечеровъ» будетъ разосла-
на въ концѣ года ПРЕМІЯ.

ПОДПИСНАЯ ЦѢНА:		
	Безъ дост.	Съ дост.
Полный журналъ (12 книжки).....	10 р.	11 р.
Отдѣлы для дѣтей (12 книжекъ).....	5 >	5 > 50 к.
„ семейнаго чтенія и юношества (12 кн.)..	5 >	5 > 50 >

Для всѣхъ учебныхъ заведеній подписавшихся на полный журналъ и обращающихся
прямо въ редакцію, уступается 1 руб.

Для земскихъ школъ, подписавшихся не менѣе какъ на 25 полныхъ экз., уступается
2 руб.

Разсрочка допускается: для лицъ служащихъ въ казенныхъ учрежденіяхъ, за ручатель-
ствомъ г.г. казначеевъ, для воспитательныхъ и учебныхъ заведеній, за ручательствомъ ихъ
начальствъ. А для прочихъ подписчиковъ—по соглашенію съ редакціею.

Разсрочка допускается по третью не иначе, какъ по соглашенію съ редакціею.

Подписка принимается: въ редакціи журнала «Семейные Вечера», С.-Петербургъ, Пушкін-
ская (Новая) ул., № 17, кв. 5.

Редакторъ-издательница С. Кашпирева, 2—3

EXPORTATION-IMPORTATION
CONSTANTIN P. CHÉHIA NTZ
MILAN (ITALIE)

Կոնստանտին Պ. ՇԵՆԻԱՆՏԻ առևտրական գրասենեակը լինելով ՄԻԱՆ, և ունենա-
լով ուղղակի յարաբերութիւններ խաղաղի, Շվեյցարիայի և Ֆրանսիայի ֆարրիկանե-
րի հետ, կընդունի յանձնարարութեամբ ապրանքներ ծախելու համար հետևեալները՝
մետաքս, բոժոժ, մետաքսի և բոժոժի մնացորդը, բուրդ, բամբակ, ցորենեղէն, նաւթ և
ընդհանրապէս Կովկասեան միւս ամեն տեսակ ապրանքները, որոնք ծախվում են Եւրո-
պայում ցանձնարարութեամբ կընդունի զարձեւող առնել Եւրոպայի ամեն տեսակ ապ-
րանքներ Կովկասի համար: Ամբողջ ապրանքները ստանալուց աժան և ձեռնտու պայ-
մաններով փող կը տայ ի հաշիւ մանրամասն տեղեկութեանց համար գրել այս հաս-
ցեով. Monsieur Constantin P. Chéhiantz, № 18, Via Lauro, Milan, (Italie)
ՄԻԼԱՆԻ (Италия).